ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

*15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2014թ.*

*ԹԻՎ 1516*

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ,

ՊԱՐՈՆ՝ Ս. Ս Ա Հ Ա Կ Յ Ա Ն Ի Ն

Կից ներկայացվում է Աշտարակ քաղաքային համայնքի ավագանու կողմից 2014թ. դեկտեմբերի 4-ին ընդունված որոշումները /արձ. 22/:

Առդիր՝ 82 թերթ:

Недействительная подпись

X

Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

***Կատարող՝***
*Գ. Դապրումյան*
*/0232/3-52-02*

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

## ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

***N 1-Ն ՈՐՈՇՈՒՄ***

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/18 , <Տեղական տուրքերի և վճարների մասին> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Սահմանել Աշտարակ քաղաքի վարչական տարածքում 2015 թվականի տեղական տուրքերի ու վճարների հետևյալ դրույքաչափերը /կցվում է՝ Հավելված1/:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու*

*04.12.2014թ. N 1-Ն որոշմամբ*

# 2015Թ. ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

| ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ | ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԵՐ /դրամ/ |
|---|---|
| 1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| հիմնական օբյեկտների համար՝ | |
| ա) մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ մինչև 15000 դրամ. | 15000 |
| բ) սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ | |
| բա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 30000 դրամ, | 30000 |
| բբ) 501-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ, | 50000 |
| բգ) 1001-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 50000 դրամ. | 50000 |
| բդ) 3001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 100000 դրամ | 100000 |
| ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝ | |
| գ) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 3000 դրամ, | 3000 |
| դ) 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մինչև 5000 դրամ: | 5000 |
| 2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝ | |
| ա) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մինչև 3000 դրամ. | 3000 |
| բ) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով. | |
| գ) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը: | |
| 3. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է մինչև 5000 դրամ: | 5000 |
| 4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| 1) ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 0-ից 17.500 դրամ. | 3250 |
| 2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1.500-ից 17.500 դրամ: | 3250 |
| 5. Համայնքի տարածքում՝ | |
| ա) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝0- 350 դրամ. | 0 |
| բ) հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 150 000-200 000 դրամ. | 200000 |
| գ) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 30 000-60 000 դրամ. | 30000 |
| գա) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի սահմանվում է. | |

| | |
|---|---|
| Հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում ` 1000-ից 6000 դրամ | 5000 |
| Ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում ` 0 -ից 1000 դրամ | 1000 |
| 5[1] . համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր տարվա համար 50.000 դրամ: | 50000 |
| 6. Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ | |
| ա) առևտրի օբյեկտների համար՝ 25 000-50 000 դրամ. | 50000 |
| բ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 50 000-100 000 դրամ. | 50000 |
| գ) բաղնիքների (սաունաների) համար՝ 200 000-500 000 դրամ. | 200000 |
| դ) խաղատների կազմակերպման համար՝ 500 000-1 000 000 դրամ. | 1000000 |
| ե) շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250 000-500 000 դրամ. | 250000 |
| զ) վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100 000-150 000 դրամ: | 150000 |
| 7. Համաքաղաքային կանոններին համապատասխան Երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝ 0-5 000 դրամ: | 0 |
| 8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝ | |
| ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000-2000 դրամ. | 2000 |
| բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2500-3500 դրամ. | 3000 |
| գ) այլ արտաքին գովազդի համար՝ 500-1500 դրամ. | 1500 |
| դ) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ: | 700 |
| 9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ: | 1000 |
| Աշտարակ համայնքի անվանումը ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 50000-ից 100000 դրամ | 50000 |
| 10. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 0-10 000 դրամ: | 10000 |

| ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ | ԴՐՈՒՅՔԱ ՉԱՓԵՐ /դրամ/ |
|---|---|
| Աշտարակ համայնքում կարող են սահմանվել տեղական վճարների հետևյալ տեսակները | |
| ա/ համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 15000 |
| բ/ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 5000 |
| գ/ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապվածծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար | 3000 |
| դ) տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար /Հավելված2/<br>-կենցաղային աղբի համար՝ ըստ հասցեի հաշվառում ունեցող կամ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար<br>-տնտեսվարող սունյեկտներին մատուցվող աղբահանության ծառայության դիմաց գանձվող ամսեկան վճար | 150 |
| | |
| Ե) Շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից տրամադրվող թույտվության վճար:<br>Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1 խմ աղբի համար<br>Ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար ըստ ծավալի 1 տոննա աղբի համար | 2500<br>8000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ . Դ Ա Տ ՈՒ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/*

## *N 2-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16/26, 28, <Համայնքային ծառայության մասին> ՀՀ օրենքի 9, 27 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի նոր հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը /հավելված 1, 2/:

- Ի գիտություն ընդունել, որ սույն որոշումն ուժի մեջ է մտնում լիազոր մարմնի կողմից հաստատվելու պահից:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հավելված 1*

*Հաստատված է համայնքի ավագանու 04.12.2014թ.*
*հմ. 2-Ա որոշմամբ*

Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Պաշտոնի անվանումը | Դրույքաչափը | |
|---|---|---|---|
| 1 | Քաղաքապետ | 265.000 | |
| 2 | Քաղաքապետի տեղակալ | 200.000 | |
| 3 | Քաղաքապետի տեղակալ | 200.000 | |
| 4 | Քաղաքապետի խորհրդական | 140.000 | |

## *Աշխատակազմ*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 5 | 1.1 | Աշխատակազմի քարտուղար | 200.000 | |
| 6 | 2.3-7 | Գլխավոր մասնագետ-իրավաբան | 120.000 | |
| 7 | 2.3-14 | Գլխավոր մասնագետ | 120.000 | |
| 8 | | Գլխավոր մասնագետ | 120.000 | |
| 9 | | Գլխավոր մասնագետ | 120.000 | |
| 10 | | Գլխավոր մասնագետ | 120.000 | |
| 11 | | Առաջատար մասնագետ | 100.000 | |
| 12 | | Առաջատար մասնագետ | 100.000 | |
| 13 | | Առաջատար մասնագետ | 100.000 | |

## *Ֆինանսատնտեսագիտական բաժին*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | 2.1-9 | Բաժնի պետ | 150.000 | |
| 15 | | Բաժնի պետի տեղակալ | 140.000 | |
| 16 | 2.3-10 | Գլխավոր մասնագետ, գլխ. հաշվապահ | 120 000 | |
| 17 | 2.3-15 | Գլխավոր մասնագետ | 120.000 | |
| 18 | 2.3-11 | Գլխավոր մասնագետ | 120 000 | |
| 19 | 2.3-16 | Գլխավոր մասնագետ | 120 000 | |
| 20 | | Առաջատար մասնագետ | 100 000 | |
| 21 | | Առաջատար մասնագետ | 100 000 | |
| 22 | | Առաջատար մասնագետ | 100 000 | |
| 23 | | 1-ին կարգի մասնագետ | 90 000 | |

## *Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 24 | 2.1-10 | Բաժնի պետ | 150.000 | |
| 25 | 2.3-12 | Գլխավոր մասնագետ | 120.000 | |
| 26 | 2.3-13 | Գլխավոր մասնագետ | 120.000 | |
| 27 | 3.1-18 | Առաջատար մասնագետ | 100.000 | |
| 28 | 3.1-19 | Առաջատար մասնագետ | 100.000 | |
| 29 | | Առաջատար մասնագետ | 100.000 | |

## *Ներքին աուդիտի բաժին*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 30 | 2.1-11 | Բաժնի պետ | 150 000 | |
| 31 | 3.1-20 | Առաջատար մասնագետ | 100 000 | |

## *ՔԿԱԳ բաժին*

| | | | | |
|---|---|---|---|---|
| 32 | 1.3-1 | Բաժնի պետ | 256623 | |
| 33 | 3.2-15 | 1-ին կարգի մասնագետ | 133602 | |
| 34 | 3.2-16 | 1-ին կարգի մասնագետ | 133602 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ . Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

*Հավելված 2*

*Հաստատված է համայնքի ավագանու 04.12.2014թ.*
*hմ. 2-Ա որոշմամբ*

## Աշտարակի քաղաքապետարանի պայմանագրային աշխատողների թվաքանակն ու պաշտոնային դրույքաչափերը

| h/h | Պաշտոնի անվանումը | Դրույքաչափը | |
|---|---|---|---|
| 1 | Շենքի տնտեսական, պահպանության և անվտանգության աշխատանքները համակարգող | 130.000 | |
| 2 | Գործավար | 85.000 | |
| 3 | Գործավար | 85.000 | |
| 4 | Գործավար | 85.000 | |
| 5 | Գործավար | 85.000 | |
| 6 | Վարորդ | 140.000 | |
| 7 | Վարորդ | 140.000 | |
| 8 | Շենքի պահպանության և անվտանգության աշխատակից | 85.000 | |
| 9 | Տարաբանվոր | 90.000 | |
| 10 | Հավաքարար | 80.000 | |
| 11 | Հավաքարար | 80.000 | |
| 12 | Հավաքարար | 80.000 | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ.ԴԱՏՈՒՄՅԱՆ

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*/Զեկուցող՝ Ա. ԱՆՏՈՆՅԱՆ/*

## *N 2.1-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 28 և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակի քաղաքապետարանի աշխատակազմի նոր կառուցվածքը՝
   - *Քաղաքապետ*
   - *Հայեցողական պաշտոններ – 3*
   - *Աշխատակազմ - 9*

   ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

   - *Ֆինանսատնտեսագիտական բաժին -10*
   - *Քաղաքաշինության և հողօգտագործման բաժին - 6*
   - *Ներքին աուդիտի բաժին - 2*

   ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄ

   - *Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժին -3*

   - *Պայմանագրային աշխատողներ -12*

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 9* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -1*

| | | |
|---|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ | ՇԱՀԱՋԻՋՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ | |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ | |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ | |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | | |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

**ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿՆ ՈՒ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

---

*/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

*N 3-Ա ՈՐՈՇՈՒՄ*

*Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի կետ 26-ի, «Նվազագույն աշխատավարձի մասին» ՀՀ օրենքի, «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի պահանջերով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ քաղաքի համայնքային ոչ առևտրային հիմնարկների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /կցվում է հավելված՝ 1, 2 ,3, 4, 5, 6, 7, 8, 9/:
2. ՀՈԱԿ-ներում 1974 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված, նվազագույն 66138 դրամ դրույքաչափով, աշխատողների համար՝ 70822 դրամ:

ԱՎԱԳԱՆԻ՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

*Հաստատված է համայնքի ավագանու*
*04.12.2014թ. հմ. 3-Ա որոշմամբ*

*Հավելված 1*

## 1,1 <Մանուշակ> մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 33

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարիչ/տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 80000 | 80000 | 1 |
| 3 | Բուժքույր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 4 | Տնտեսվար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 5 | Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ | 1 | 120000 | 120000 | 1 |
| 6 | Գործավար/կադրերի պատասխանատու | 1 | 66138 | 66138 | 1 |
| 7 | Երաժշտության դաստիարակ | 1 | 120000 | 120000 | 2 |
| 8 | Դերձակ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 9 | Խոհարար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 10 | Հնոցապան/տարաբանվոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 11 | Դաստիարակ | 5 | 120000 | 600000 | 10 |
| 12 | Դաստիարակի օգնական | 5 | 66138 | 330690 | 5 |
| 13 | Լոգոպեդ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 14 | Սոց մանկավարժ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 15 | Ֆիզկուլտ դաստիարակ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 16 | Պարուսույց | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 17 | Դռնապան, Այգեպան, բակապան | 1 | 66138 | 66138 | 1 |
| 18 | Հավաքարար | 2 | 66138 | 132276 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **24,5** | | **2148656** | **33** |

## 1,2 <Հովիկ> մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 33

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարիչ/տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 80000 | 80000 | 1 |
| 3 | Բուժքույր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 4 | Տնտեսվար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 5 | Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ | 1 | 120000 | 120000 | 1 |
| 6 | Գործավար/կադրերի պատասխանատու | 1 | 66138 | 66138 | 1 |
| 7 | Երաժշտության դաստիարակ | 1 | 120000 | 120000 | 2 |
| 8 | Դերձակ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 9 | Խոհարար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 10 | Հնոցապան/տարաբանվոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 11 | Դաստիարակ | 5 | 120000 | 600000 | 10 |
| 12 | Դաստիարակի օգնական | 5 | 66138 | 330690 | 5 |
| 13 | Լոգոպեդ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 14 | Սոց մանկավարժ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 15 | Ֆիզկուլտ դաստիարակ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 16 | Պարուսույց | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 17 | Դռնապան, Այգեպան, բակապան | 1 | 66138 | 66138 | 1 |
| 18 | Հավաքարար | 2 | 66138 | 132276 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **24,5** | | **2148656** | **33** |

### 1,3 <Արևիկ> մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը` 29

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարիչ/տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 80000 | 80000 | 1 |
| 3 | Բուժքույր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 4 | Տնտեսվար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 5 | Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 6 | Գործավար/կադրերի պատասխանատու | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 7 | Երաժշտության դաստիարակ | 0,6 | 120000 | 72000 | 1 |
| 8 | Դերձակ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 9 | Խոհարար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 10 | Հնոցապան/տարաբանվոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 11 | Դաստիարակ | 4 | 120000 | 480000 | 8 |
| 12 | Դաստիարակի օգնական | 4 | 66138 | 264552 | 4 |
| 13 | Լոգոպեդ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 14 | Սոց մանկավարժ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 15 | Ֆիզկուլտ դաստիարակ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 16 | Պարուսույց | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 17 | Դռնապան, Այգեպան, բակապան | 1 | 66138 | 66138 | 1 |
| 18 | Հավաքարար | 2 | 66138 | 132276 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **21,1** | | **1794518** | **29** |

### 1,4 <Հասմիկ> մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը` 29

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարիչ/տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 80000 | 80000 | 1 |
| 3 | Բուժքույր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 4 | Տնտեսվար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 5 | Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 6 | Գործավար/կադրերի պատասխանատու | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 7 | Երաժշտության դաստիարակ | 0,6 | 120000 | 72000 | 1 |
| 8 | Դերձակ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 9 | Խոհարար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 10 | Հնոցապան/տարաբանվոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 11 | Դաստիարակ | 4 | 120000 | 480000 | 8 |
| 12 | Դաստիարակի օգնական | 4 | 66138 | 264552 | 4 |
| 13 | Լոգոպեդ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 14 | Սոց մանկավարժ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 15 | Ֆիզկուլտ դաստիարակ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 16 | Պարուսույց | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 17 | Դռնապան, Այգեպան, բակապան | 1 | 66138 | 66138 | 1 |
| 18 | Հավաքարար | 2 | 66138 | 132276 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **21,1** | | **1794518** | **29** |

### 1,5 <Ա.Մուրադյան> մանկապարտեզ ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը 29

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Վարիչ/տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Հաշվապահ | 1 | 80000 | 80000 | 1 |
| 3 | Բուժքույր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 4 | Տնտեսվար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 5 | Մեթոդիստ ուսումնական գծով տնօրենի տեղակալ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 6 | Գործավար/կադրերի պատասխանատու | 1 | 66138 | 66138 | 1 |
| 7 | Երաժշտության դաստիարակ | 0,6 | 120000 | 72000 | 1 |
| 8 | Դերձակ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 9 | Խոհարար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 10 | Հնոցապան/տարաբանվոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 11 | Դաստիարակ | 4 | 120000 | 480000 | 8 |
| 12 | Դաստիարակի օգնական | 4 | 66138 | 264552 | 4 |
| 13 | Լոգոպեդ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 14 | Սոց մանկավարժ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 15 | Ֆիզկուլտ դաստիարակ | 0,5 | 120000 | 60000 | 1 |
| 16 | Պարուսույց | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 17 | Դռնապան, Այգեպան, բակապան | 1 | 66138 | 66138 | 1 |
| 18 | Հավաքարար | 2 | 66138 | 132276 | 2 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **21,6** | | **1827587** | **29** |

*Հավելված 2*

ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ ՍՏՈՒԴԻԱ

Աշխատակիցների թվաքանակը՝ **14**

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 75000 | 75000 | 1 |
| 3 | Հավաքարար | 1 | 66138 | 66138 | 1 |
| 4 | Գործավար /կադրերի պատասխանատու | 1 | 66138 | 66138 | 1 |
| 5 | Հանդերձապահ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 6 | Դռնապան | 1 | 66138 | 66138 | 1 |
| 7 | Պարուսույց | 5 | 70000 | 350000 | 5 |
| 9 | Պարուսույց, "Քասախ" համույթի ղեկավար | 1 | 70000 | 70000 | 1 |
| 10 | Ընտրովի դասաժամերի մանկավարժ | 1 | 70000 | 70000 | 1 |
| 13 | Տնտեսվար | 1 | 66138 | 66138 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **13,5** | | **967621** | **14** |

*Հավելված 3*

ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ

Աշխատակիցների թվաքանակը՝ **17**

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 75000 | 75000 | 1 |
| 3 | Գործավար | 1 | 66138 | 66138 | 1 |
| 4 | Տնտեսվար | 1 | 66138 | 67000 | 1 |
| 5 | Լաբորանտ | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 6 | Դռնապան | 1 | 66138 | 66138 | 2 |
| 7 | Հավաքարար | 1 | 66138 | 66138 | 2 |
| 8 | Մանկավարժ | 8 | 70000 | 560000 | 8 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **14,5** | | **1038483** | **17** |

*Հավելված 4*

## ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Աշխատակիցների թվաքանակը՝ 43

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն / մանկավարժ | 1 | 105000 | 105000 | 1 |
| 2 | Փոխտնօրեն / մանկավարժ | 1 | 90000 | 90000 | 1 |
| 3 | Հաշվապահ | 1 | 80000 | 80000 | 1 |
| 4 | բաժնի վարիչ | 2 | 80000 | 160000 | 2 |
| 5 | Գործավար | 1 | 66138 | 66138 | 1 |
| 6 | Գրադարանավար | 1 | 66138 | 66138 | 1 |
| 7 | Տնտեսվար | 1 | 75000 | 75000 | 1 |
| 8 | Լարող վարպետ | 1 | 66138 | 66138 | 1 |
| 9 | Հավաքարար | 3 | 66138 | 198414 | 3 |
| 10 | Մանկավարժ 1-ին կարգ- բարձրագույն կրթություն, 15 տարուց ավելի ստաժ | 9 | 78000 | 702000 | |
| 11 | Մանկավարժ 2-րդ կարգ- բարձրագույն կրթություն, մինչև 15 տարի կամ միջին մասնագիտական, 15 տարուց ավելի | 10 | 75000 | 750000 | 30 |
| 12 | Մանկավարժ 3-րդ կարգ- միջին մասնագիտական կրթություն, 0-15 տարի ստաժ | 9 | 72000 | 648000 | |
| 13 | Փականագործ/հնոցապան | 1 | 66138 | 66138 | 1 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 41 | | 3072966 | 43 |

*Հավելված 5*

## ՄԱՐԶԱԴՊՐՈՑ

Աշխատակիցների թվաքանակը՝ 10

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 70000 | 70000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 66138 | 66138 | 1 |
| 3 | Մարզիչ | 6 | 66138 | 396828 | 6 |
| 4 | Բուժքույր | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| 5 | Հավաքարար | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 9 | | 599104 | 10 |

*Հավելված 6*

## ԱՐԱՅԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 5

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 90000 | 90000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 66138 | 66138 | 1 |
| 3 | Գրադարանավար | 1,5 | 66138 | 99207 | 2 |
| 4 | Հավաքարար | 0,5 | 66138 | 33069 | 1 |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 4 | | 288414 | 5 |

*Հավելված 7*

## ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏՈՒՆ

Աշխատակիցների թվաքանակը՝ 19

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 105000 | 105000 | 1 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | Փոխտնօրեն | 1 | 85000 | 85000 | |
| 3 | Տնօրենի օգնական | 1 | 85000 | 85000 | 1 |
| 4 | Հաշվապահ | 1 | 70000 | 70000 | 1 |
| 4 | Գեղմասվար | 1 | 85000 | 85000 | 1 |
| 5 | Տնտեսվար | 1 | 67000 | 67000 | 1 |
| 6 | Տեսա-ֆոտոնկարահանող | 1 | 75000 | 75000 | 2 |
| 7 | Տեսամոնտաժող | 1 | 75000 | 75000 | 2 |
| 8 | Լրագրող, սցենարիստ | 1 | 85000 | 85000 | 1 |
| 9 | Լուսային օպերատոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 10 | Ձայնային օպերատոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| 11 | Հսկիչ | 1 | 66138 | 66138 | 1 |
| 12 | հավաքարար | 2 | 66138 | 132276 | 2 |
| 13 | Պահակ | 3 | 66138 | 198414 | 3 |
| 14 | Բեմի բանվոր | 1 | 66138 | 66138 | 1 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **18** | | **1327242** | 19 |

*Հավելված 8* <Բարեկարգում> ՀՈԱԿ

Աշխատակիցների թվաքանակը՝ 24

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 170000 | 170000 | 1 |
| 2 | Հաշվապահ | 1 | 100000 | 100000 | 1 |
| 3 | Ինժեներ | 1 | 140000 | 140000 | 1 |
| 4 | Վարորդ-կոյուղագործ | 1 | 106000 | 106000 | 1 |
| 5 | Լուսավորության համակարգի պատասխանատու | 2 | 106000 | 212000 | 2 |
| 6 | Գնումների համակարգող | 1 | 120000 | 120000 | 1 |
| 7 | Տարաբանվոր | 6 | 100000 | 600000 | 6 |
| 8 | Անձնագրավար | 1 | 90000 | 90000 | 1 |
| 9 | Տարաբանվոր | 10 | պայմ. | | 10 |
| | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **24** | | **1538000** | **24** |

Հավելված 9 **<Կոմունալ> ՀՈԱԿ**

Աշխատակիցների թվաքանակը՝ 37

| N | Հաստիքացուցակ | Հաստիքային միավորը | 1 միավորի դրույքաչափը /դրամ/ | Ընդամենը | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 150000 | 150000 | 1 |
| 2 | Փոխտնօրեն | 1 | 130000 | 130000 | 1 |
| 3 | Գերեզմանատան պատասխանատու | 1 | 120000 | 120000 | 1 |
| 4 | Գերեզմանատան "Ձախ ափ" տեղամասի պատասխանատու | 1 | 90000 | 90000 | 1 |
| 5 | Հաշվապահ | 1 | 135000 | 135000 | 1 |
| 6 | Հաշվետար | 1 | 90000 | 90000 | 1 |
| 7 | Վարորդ | 6 | 120000 | 720000 | 6 |
| 8 | Մեխանիզատոր | 1 | 135000 | 135000 | 1 |
| 9 | Բանվոր | 7 | 106000 | 742000 | 7 |
| 10 | Հավաքարար | 12 | 95000 | 1140000 | 12 |
| 11 | Հաշվառիչ | 5 | Պայմ. | | 5 |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **37** | | **3452000** | **37** |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Գ. Դ Ա Տ Ո Ւ Մ Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014Թ-Ի ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

*N 5-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով, առաջնորդվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 62 և <Բյուջետային համակարգի մասին> ՀՀ օրենքի 29 հոդվածների պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ.-ի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե 13.000.000 դրամ /տասներեք միլիոն/ գումար հատկացնելու առաջարկությանը:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Զ. ԳԵՎՈՐԳՅԱՆ/*

## *N 5.1-Ն ՈՐՈՇՈՒՄ*

*Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով «2014թ-ի բյուջեի առկա ֆինանսական միջոցները համամասնորեն բաշխելու» ինչպես նաև ծախսային մասը արդյունավետ կազմակերպելու նպատակով՝ առաջնորդվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16/3 և «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 34/4 հոդվածների պահանջներով համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի եկամտային մասի փոփոխության առաջարկությանը՝ համաձայն հատված 1-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման, համաձայն հատված 2-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման,համաձայն հատված 3-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդին կամ դեֆիցիտին (պակասուրդին), համաձայն հատված 4-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի տարեկան բյուջեի տարեվերջի հավելուրդի օգտագործման ուղղություններին կամ դեֆիցիտի (պակասուրդի) ֆինանսավորման աղբյուրներին՝ համաձայն հատված 5-ի:
- Հավանություն տալ Աշտարակ քաղաքի 2014թ-ի տարեկան բյուջեի ծախսային մասի փոփոխության առաջարկությանը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական և տնտեսագիտական դասակարգման, համաձայն հատված 6-ի:
- «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝
  ա) թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի բյուջեի կատարման ընթացքում կատարելու վերաբաշխումներ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման ծախսերի նախատեսված հոդվածների միջև, /հազ.դրամ/

| | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե | Ընդ. |
|---|---|---|---|
| Եկամտային մաս | 430702.4 | 22000,0 | 430702.4 |
| Ծախսային մաս | 430702.4 | 45511,4 | 457213.8 |
| Դեֆիցիտ | ------ | -23511,4 | -23511.4 |
| Պահուստային ֆոնդ | 22000,0 | | |

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՃՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՄԵՆ ԱՆՏՈՆՅԱՆԻՆ <ՔԱՂԱՔԱՊԵՏԵՐԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ> ՍՏՈՐԱԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Գ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ/*

## *<u>N 6-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>*

*Նպատակ ունենալով միանալու Եվրոպական Միության գլխավոր նախաձեռնությանը, որը ներառում է այն տեղական, տարածաշրջանային և իշխանության ազգային մարմինները, որոնք կամավոր ստանձնել են էներգիայի արդյունավետությունը մեծացնելու և իրենց տարածքներում էներգիայի վերականգնվող աղբյուրները կիրառելու պարտականությունները, ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի կետ 22-ի պահանջերով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Համաձայնություն տալ Աշտարակ համայնքի ղեկավար Արմեն Անտոնյանին՝ ստորագրելու <Քաղաքապետերի դաշնագիրը>:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն

Ես, [Քաղաքապետի կամ այլ լիազորված ներկայացուցչի անունը], [Քաղաքապետ կամ պաշտոնի անվանումը] [Քաղաքի/ շրջանի/ տարածքային միավորման անվանումը] տեղեկացնում եմ Ձեզ, որ [Քաղաքային խորհուրդ կամ որոշում կայացնող այլ համազոր մարմնի] [ամսաթիվ]-ին տեղի ունեցած հանդիպմանը որոշվեց հանձնարարագիր տալ [ինձ / օրինական ներկայացուցչին՝ Քաղաքապետին,նախագահին..] ընդունվելու Քաղաքապետերի Դաշնագրում՝ բոլոր պարտականությունների լիակատար իմացությամբ, մասնավորապես.

- **ԵՄ-ի կողմից 2020թ. համար սահմանած նպատակների սահմաններից դուրս գալ**՝ նվազեցնելով ածխաթթու գազի ($CO_2$) արտանետումները մեր համապատասխան տարածքներում՝ նվազագույնը 20%-ով,
- **ներկայացնել Կայուն էներգիայի գործողությունների ծրագիր**, ներառյալ նախանական արտանետումների ցուցակագրում, որն ընդգծում է, թե ինչպես պետք է հասնել նպատակներին՝ վերը նշված ամսաթվից սկսած մեկ տարվա ընթացքում,
- **ներկայացնել գործողությունների իրականացման հաշվետվություն՝ նվազագույնը յուրաքանչյուր** երկու տարին մեկ՝ Գործողությունների ծրագիրը գնահատման, վերահսկման և վավերացման ներկայացնելուց հետո,
- **կազմակերպել էներգիայի օրեր՝ Եվրախորհրդի և այլ շահագրգիռ կողմերի հետ համագործակցությամբ՝ թույլ տալով քաղաքացիներին ուղղակիորեն օգտվել էներգիայի ավելի խելամիտ օգտագործմամբ ընձեռնված հնարավորություններից և առավելություններից, ինչպես նաև տեղական լրատվամիջոցներին կանոնավոր կերպով տեղեկացնելով գործողությունների ծրագրին առնչվող զարգացումների վերաբերյալ,**
- **մասնակցել և ներդրում ունենալ ԵՄ-ի քաղաքապետերի տարեկան համաժողովին**՝ «Կայուն էներգիա Եվրոպային» ծրագրի համար:

[Քաղաքի/շրջանի/տարածքային միավորման անվանումն ու ամբողջական հասցեն]

[Կոնտակտային անձի անունը, էլ. փոստի հասցեն և հեռախոսահամարը]

[Ամսաթիվ], ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

# Քաղաքապետերի Դաշնագիր



**Քաղաքապետերի Դաշնագիրը Եվրամիության կողմից ձեռնարկված՝ ընդունված ուղղությանը միտված նախաձեռնություն է՝ ներառելու տեղական և տարածաշրջանային իշխանություններին, ովքեր կամավոր կերպով համաձայն են իրենց տարածաշրջաններում բարձրացնել էներգիայի արդյունավետությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը: Նրանց պատասխանատվությամբ, Դաշնագիրն ստորագրող կողմերը նպատակ ունեն մինչև 2020թ. ածխաթթու գազի ($CO_2$) արտանետումները նվազեցնել առնվազն 20% -ով՝ այդպիսով նպաստելով կանաչ տնտեսական աճին և կյանքի բարելավված որակին:**

## Դաշնագիրը մի ակնարկով

2008թ.-ին ԵՄ Կլիմայի և Էներգիայի փաթեթի ընդունումից հետո, Եվրոպական Հանձնաժողովը նախաձեռնեց Քաղաքապետերի Դաշնագիրը՝ հավանություն տալու և աջակցելու տեղական ինքնակառավարման մարմինների կողմից կայուն էներգիայի համար տարվող քաղաքականությունների զարգացմանն ու իրականացմանն ուղղված ջանքերին: Անշուշտ, տեղական կառավարությունները շատ կարևոր դեր են խաղում կլիմայական փոփոխությունների ազդեցությունների մեղմացման գործում, առավել ևս, երբ էներգիայի սպառման 80%-ը և $CO_2$ արտանետումները կապված են քաղաքային գործունեության հետ:

Քաղաքապետերի Դաշնագրի միջոցով Եվրամիության հաստատություններն աննախադեպ քայլ են ձեռնարկել՝ ուղղակիորեն ներգրավելով տեղական և տարածաշրջանային իշխանություններին, այդպիսով ընդունելով նրանց կարևոր դերը էնեգիայի և կլիմայի հավակնոտ նպատակներին հասնելու համար:

## Գործողությունները խոսում են իրենց մասին

Իրենց քաղաքական խոստումները փաստացի գործողությունների և ծրագրերի մեջ կյանքի կոչելու համար Դաշնագիրն ստորագրող կողմերը հատկապես հանձն են առել կայուն էներգիայի տեղական քաղաքականություն և էներգիայի կառավարման համապատասխան կարողություններ զարգացնելուց հետո պատրաստել Արտանետումների նախնական գույքագուցակ և նրանց ստորագրմանն հաջորդող տարվա ընթացքում ներկայացնել Կայուն էներգիայի գործողությունների ծրագիր՝ ընդհանուր գծերով նկարագրելով այն հիմնական գործողությունները, որոնք նրանք պլանավորում են հանձն առնել:

Բացի էներգիայի խնայողություններից, ստորագրող կողմերի գործողությունների արդյունքները բազմաթիվ են. հասանելիություն էներգիայի մաքուր և մատչելի ծառայությունների, որակյալ և կայուն աշխատատեղերի ստեղծում, ավելի բարձր ֆինանսական և սոցիալական կայունություն, ավելի առողջ շրջակա միջավայր և կյանքի բարելավված որակ, հզորացված տնտեսական

մրցունակություն՝ բիզնեսի զարգացման և նորարարությունների, ինչպես նաև հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների միջոցով: Այս գործողությունները ուրիշների համար ծառայում են որպես օրինակ՝ հիմնականում անդրադառնալով «Գերազանցության չափանիշին»՝Դաշնագրի ստորագրող կողմերի լավագույն փորձի տեղեկատվական բազային: Կայուն էներգիայի գործողությունների ծրագրերի կատալոգը հանդիսանում է ոգեշնչման մեկ այլ այդպիսի եզակի աղբյուր, քանի որ այն մի հայացքով ներկայացնում է այլ ստորագրող կողմերի առաջադրած հավակնոտ նպատակները և այն հիմնական գործողությունները, որոնք նրանք նախաձեռնել են դրանց հասնելու համար:

## Բազմակողմանի աջակցություն

### Ստորագրող կողմերի երկրներում

Մինչ մեծ թվով տեղական ինքնակառավարման մարմիններ քաղաքական կամք են դրսևորում՝ միանալու Դաշնագրին՝ նրանք միշտ չէ որ ունենում են անհրաժեշտ քաղաքական և վարչական կարողություններ, ինչպես նաև ֆինանսական և տեխնիկական ռեսուրսներ՝ կյանքի կոչելու իրենց հավակնոտ նպատակները: Այդ պատճառով պետական իշխանություններին և ցանցերին, որոնք կարող են աջակցել ստորագրող կողմերին՝ իրենց հավակնոտ նպատակներին հասնելու գործում, Դաշնագրի շրջանակներում շնորհվել է հատուկ կարգավիճակ:
Տեղական իշխանությունների ցանցերը կամ ասոցիացիաները, որոնք հայտնի են որպես Դաշնագրի աջակիցներ, համաձայնում են առավելագույնս մեծացնելու նախաձեռնության ազդեցությունը՝ խթանող գործողությունների, իրենց անդամների հետ կապի և փորձի փոխանակման մասին արտահայտվելու հնարավորությունների միջոցով:

### Քաղաքապետերի Դաշնագրի գրասենյակներից

Դաշնագիրն ստորագրող կողմերին, Դաշնագրի համակարգողներին և Դաշնագրի աջակիցներին ամենօրյա զարգացման, տեխնիկական և վարչական աջակցություն է տրամադրվում Քաղաքապետերի Դաշնագրի Բրյուսելի գրասենյակից (CoMO), ինչպես նաև Քաղաքապետերի Դաշնագրի Լվովի և Թբիլիսիի մասնաճյուղերի գրասենյակներից (CoMO East): Երկու գրասենյակներն էլ կառավարվում են կազմակերպությունների միավորումների կողմից՝ ներկայացնելով տեղական, տարածաշրջանային և պետական իշխանությունները: Քաղաքապետերի Դաշնագրի Բրյուսելի գրասենյակը պատասխանատու է նախաձեռնության ընդհանուր համակարգման համար:

### Համատեղ հետազոտական կենտրոնի կողմից

CoMO գրասենյակների հետ համագործակցությամբ Եվրոպական Հանձնաժողովի Համատեղ հետազոտական կենտրոնն աջակցում է ստորագրող կողմերին գիտական և տեխնիկական հարցերում, որոնք հիմնականում կապված են Արտանետումների նախնական գույքագուցակների և Կայուն էներգիայի գործողությունների ծրագրի հետ:
Ստորագրող կողմերն ուղղորդվում են բազմաթիվ գործիքների և մեթոդոլոգիաների գործընթացի միջով, որոնք ստեղծվել են CoMO գրասենյակների և JRC-ի համակարգմամբ:

### ԵՄ կառույցների կողմից

Եվրոպական Հանձնաժողովի հետ՝ Դաշնագրի նախաձեռնությունն օգտվում է ողջ ինստիտուցիոնալ աջակցությունից՝ ներառյալ Տարածաշրջանների հանձնաժողովից, որն ի սկզբանե աջակցում է նախաձեռնությանը, Եվրախորհրդարանը, որտեղ կատարվում է տարեկան ստորագրման արարողությունը, և Եվրոպական ներդրումների բանկը, որն աջակցում է տեղական իշխանություններին՝ բացելու իրենց ներդրումների հնարավորությունները:

# <u>ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ</u>

*04-ը դեկտեմբերի 2014թ.*

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

*/Զեկուցող՝ Հ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ/*

## *<u>N 7-Ա ՈՐՈՇՈՒՄ</u>*

*Հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունը՝ Վահե Բաղալյանի սեփականությունը հանդիսացող Աշտարակ քաղաքի <Արայի> տեղամասում գտնվող 02-001-0851-0042 ծածկագրով 0.259952հա գյուղատնտեսական նշանակության արոտավայրի նպատակային նշանակությունը բնակելի տուն կառուցելու համար բնակավայրերի նշանակության, բնակելի կառուցապատման փոփոխելու մասին, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հավելվածի 49-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8/1 կետի, <Տեղական ինքնակառավարման մասին> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջներով, համայնքի ավագանին՝*

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Հաստատել Աշտարակ քաղաքի գլխավոր հատակագծի փոփոխությունը և <Արայի տեղամասում գտնվող 02-001-0851-0042 ծածկագրով, քաղաքացի Վահե Բաղալյանին սեփականության իրավունքով պատկանող գյուղատնտեսական նշանակության 0.259952հա արոտավայրի նպատակային նշանակությունը բնակելի տուն կառուցելու համար համարել փոփոխված որպես բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամաս:
2. Ի գիտություն ընդունել, որ փոփոխվող հողամասերի կադաստրային արժեքների տարբերությունը ենթակա է վճարման համայնքի բյուջե:

<u>Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝</u>

*ԿՈՂՄ - 10* *ԴԵՄ – 0* *ՁԵՌՆՊԱՀ -0*

| | |
|---|---|
| ԳԱԼՍՏՅԱՆ ՏԻԳՐԱՆ | ՆԱՀԱՊԵՏՅԱՆ ԱՐԹՈՒՐ |
| ԳԱՍՊԱՐՅԱՆ ԿԱՐՈ | ՇԱՀԱԶԻԶՅԱՆ ԿԱՐԵՆ |
| ՀՈՒՆԱՆՅԱՆ ԱՇՈՏ | ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ |
| ՂԱԼԱՉՅԱՆ ԱՐՍԵՆ | ՔԱՄԱԼՅԱՆ ԱՐԱՄ |
| ՄԿՐՏՉՅԱՆ ՎԱՀԱԳՆ | ՏԱՇՉՅԱՆ ՄՈՒՇԵՂ |

ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. Ա Ն Տ Ո Ն Յ Ա Ն